



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՊՍԱԿԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Կնոջը և տղամարդուն միացնող կապը սրբագործվում է եկեղեցում, և այդ միությունը հաստատվում է սուրբ պսակով՝ ամուսնությամբ: Պսակը Հայ առաքելական եկեղեցու յոթ խորհուրդներից է, որը կատարվում է քահանայի օրհնությամբ և եկեղեցու սրբագործմամբ: Առանց պսակի խորհրդի ամուսնությունը Հայ առաքելական եկեղեցին վավեր չի համարվում [1]: Այս խորհրդի միջոցով երկու անձնավորություններ՝ այր ու կին, ստանալով աստվածային օրհնություն, խորհրդավորությամբ դառնում են մեկ մարմին: Պսակի խորհուրդը սկզբնավորվել է դեռևս դրախտում մինչև ադամական մեղքը, երբ Աստված, ստեղծելով Ադամին և Եվային, սահմանեց ամուսնության միությունը և օրհնելով նրանց՝ ասաց. «Աճեցե՛ք և բազմացե՛ք» (*Ծննդ. Ա 22, 28*): Իսկ Հիսուս Քրիստոսը, մասնակցելով և իր մասնակցությամբ աստվածային օրհնության արժանացնելով Կանայի հարսանիքը (*Հովհ. Բ 1-12*), ևս մեկ անգամ անուղղակիորեն փաստեց դրա կարևորությունը քրիստոնյայի կյանքում:

Ամուսնությունն ընտանիքին առընչվող այն հարցերն են, որոնք այսօր ակտիվորեն քննարկում, ուսումնասիրում են տարբեր տեսանկյուններից՝ ոչ միայն եկեղեցական, այլև փիլիսոփայական, հոգեբանական, սոցիոլոգիական և այլն: Ամուսնությունը՝ որպես իրավական դաշնադրություն, ի հայտ է եկել մինչ քրիստոնեությունը և ունեցել է հիերարխիկ կառուցվածք: Իսկ քրիստոնեությունը, բացասելով ու մերժելով հեթանոսական պատկերացումները, ծայրահեղությունները և կամայականությունն ամուսնության խնդրում, կանոնակարգեց և սահմանեց քրիստոնեական ամուսնությունը՝ պսակը: Հայաստանում եկեղեցու օրհնությամբ պսակադրությունը դառնում է ամուսնության ճանաչված կարգ դեռևս V դարի կեսերին: Այս հետևությունը բխում է Սահակ Ա. Պարթևի (388-439 թթ.) և Շահապիվանի ժողովի (444 թ.) կանոններից: Վերջինս պսակը վերահաստատեց և ճանաչեց իբրև օրինական ամուսնության պարտադիր կարգ թե՛ նախարարների, թե՛ ազատների, և թե՛ շինականների համար [2]:

Հայ առաքելական եկեղեցին պսակի խորհուրդը կատարում է համապատասխան ծիսական արարողությամբ, որն ամփոփված է «Մաշտոց» (խորհուրդների կատարման և նմանօրինակ գործողությունների համար սահմանված ծիսական կարգերի ու աղոթքների գիրք է) ժողովածուում [3]: Եկեղեցում կատարվող յուրաքանչյուր արարողություն (սկսած մուտքը եկեղեցի՝ ծիսակարգի հերթականությամբ) և ծիսական գործողություն ունի խորհրդանշական իմաստ [1]: Հայոց եկեղեցում կատարվող պսակի կարգն ունի հոգևոր խորհուրդ և այլաբանական մեկնություն, որի մասին խոսել են թե՛ Ընդհանրական, թե՛ Հայ առաքելական եկեղեցու մեծանուն հայրերը

(Հովհան Ոսկերեցի, Գրիգոր Տաթևացի և այլն): Ըստ մեկնությունների՝ «Ամուսնությունը սուկ մարմնական միաւորում մը չէ, որ գաղափարական կերպով կը պարկերացնէ Քրիստոսի միութիւնը իր եկեղեցւոյ հետ: Աստուածաշունչի մէջ եկեղեցին նմանեցուած է հարսի և Քրիստոսի՝ փեսայի: Ինչպէս որ Քրիստոս և եկեղեցի անբաժան են իրարմէ, այնպէս ալ այր և կին երկուք չեն՝ այլ մէկ, ու կը կազմեն անբաժան մարմին մը և ցմահ կապուած կը մնան իրարու» [4]: Հայ եկեղեցու նշանավոր մի շարք գործիչներ անդրադարձել են պսակի խորհրդին՝ սահմանելով կանոնական և ծիսական նորմեր, որոնք գործածական են միջև օրս (Գրիգոր Լուսավորիչ, Ներսես Մեծ, Սահակ Պարթև և այլն): Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ ներկայումս Հայ եկեղեցում կատարվող պսակի խորհուրդը ձևով և կառուցվածքով տարբերվում է նախկինում կատարված պսակի կարգից: Հնում եկեղեցում կատարվող ծիսական արարողություններից շատերն այժմ չեն կատարվում կամ կատարվում են միայն պսակի օրհնության օրը, այսինքն, բոլոր արարողությունները խտացվում և նշվում են մեկ արարողությամբ՝ ինչպես, օրինակ, հանձնառության խոստումը կամ թագ վերցնելու կարգը [5]՝ և այլն: Պսակի խորհրդի միջոցով Հայ եկեղեցին շեշտում է ընտանիքի ամրության և կայունության կարևորությունը: Թերևս այս է պատճառը, որ Հայ եկեղեցին ոչ միայն չի խրախուսում, այլև շատ դեպքերում արգելում է ամուսնալուծությունը: Նշենք, որ հեթանոսական շրջանում Հայաստանի օրենսդրությունը ոչ միայն չէր խոչընդոտում ազատ և կամայական ամուսնալուծությունները, այլև շատ հաճախ նպաստում էր դրանց [2], սակայն քրիստոնեական կրոնի ազդեցության ներքո կյանքի կոչվեցին բարոյական նոր պատկերացումներ և դրանց համապատասխան՝ աշխարհիկ և կանոնական նորմեր, որոնք ներգործության իրավական միջոցներով փորձեցին սահմանափակել ամուսնալուծության հիմքերը [2]: Հայ եկեղեցին պսակը համարում է անքակտելի՝ ըստ Հիսուս Քրիստոսի պատգամի. «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ 6): Այս է պատճառը, որ Հայ առաքելական եկեղեցում չկա հատուկ արարողակարգ կամ կանոն, որով եկեղեցին լուծանի պսակը և հետո կատարի երկրորդ ամուսնության կարգը: Սակայն, այնուամենայնիվ, IV-V դարերում հոգևոր առաջնորդները, հաշվի նստելով կյանքի պահանջների հետ, ընդարձակում են ամուսնալուծության իրավական հիմքերը: Հայոց եկեղեցին հատկապես V դարում ընդունեց մի շարք կանոնական նորմեր, որոնցով եկեղեցին թույլ էր տալիս զույգերի ամուսնալուծությունը: Հիշյալ ժամանակաշրջանում Հայոց եկեղեցին թույլ էր տալիս զույգերի ամուսնալուծությունը հետևյալ դեպքերում.

- ամուսիններից մեկի մահվան,
- երկարամյա անհայտ բացակայության (7 տարի) [6],
- անհավատարմության (դավաճանություն, պոռնկություն),

¹ Հնում այս արարողությունները կատարվել են առանձին-առանձին, որոնց համար Հայ եկեղեցու սուրբ հայրերը սահմանեցին հատուկ կարգ:

Ֆիզիկական և հոգեկան որոշակի հիվանդություններով տառապելու դեպքում (բորոտության, պիսակության², գոնջություն³, դիվահարություն) [7]:

Միայն հիշատակված կետերի առկայության դեպքում է պսակը լուծված համարվում, և եկեղեցին իրավունք է ունենում կատարել երկրորդ պսակի կարգը: Այս նորմերը հետագայում՝ կախված պատմական ժամանակաշրջանից, երկրի սոցիալ-քաղաքական դրությունից, փոփոխվել են: Շատ հաճախ հայոց կաթողիկոսներն իրենց կանոնական սահմանումներով ընդլայնել կամ կրճատել են են այս պայմանները: Այսպես, օրինակ, Ներսես Ե-ն (1843-1857 թթ.) հրամայեց ամլության համար անկարելի համարել պսակալուծությունը, Գևորգ Դ. կաթողիկոսն (1866-1882 թթ.) ընդհանրապես անլուծելի համարեց պսակը, իսկ Մկրտիչ Ա. Խրիմյանը (1892-1907 թթ.) պսակալուծությունը թույլատրում էր շատ դեպքերում: Ամենաշատ այդպիսի դեպքեր եղել են նրա կաթողիկոսության օրոք [8]: Հիսուս Քրիստոսը լեռան վրա ժողովրդին քարոզելու ժամանակ խոսեց նաև ամուսնալուծությունների մասին՝ նշելով միայն մեկ պատճառ դրա համար, այն է՝ շնությունը: Երբ հրեաներն առարկեցին Քրիստոսին՝ ասելով, որ Մովսեսը պատվիրեց ամուսնալուծության դեպքում ապահարզանի թուղթ տրամադրել և ամուսնալուծվել, Քրիստոսն ասաց. «Մովսեսը ձեր խստասրտության պատճառով այդպես պատվիրեց» (*Մատթ. ԺԹ 7-8, Մարկ. Ժ 4-5*)⁴, մեկ այլ ժամանակ՝ «Ամեն մարդ, որ իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, նա՛ է, որ նրան շնության է մղում. և ով որ արձակվածին է առնում, շնանում է», «Ով իր կնոջն արձակում է, և դա պոռնկության պատճառով չէ, և ուրիշին է առնում, շնանում է. շնանում է և նա, ով արձակվածին է առնում» (*Մատթ. Ե 32, ԺԹ 9*): Բայց Հիսուս Քրիստոսն այս կարգադրությամբ ոչ թե ընդհանրապես մերժեց ամուսնալուծության գնալու բացառիկ դեպքերը, այլ արգելեց այդ կարևոր հարցում մարդու անհատական կամքի կամ քմահաճույքի դրսևորումը: Նույնը հորդորեց նաև Պողոս առաքյալը, ով փորձեց մեղմել ամուսնալուծության իրավունքի միակողմանիությունը և դատապարտեց նաև տղամարդու պոռնկությունը (տե՛ս Ա Կորնթ. Զ 16, Է 10-11):

Այսպիսով, պարզ է դառնում, որ թե՛ Սուրբ Գիրքը, թե՛ Հայ առաքելական եկեղեցու կանոնական սահմանումներն, այնուամենայնիվ, թույլատրում են ամուսնալուծությունը: Ամուսնալուծության գաղափարի հետ կապված է նաև երկրորդ, երրորդ պսակի խնդիրը: Բանն այն է, որ երկրորդ ամուսնությունը թույլատրվում էր միայն եկեղեցում ամուսնալուծության կարգը կատարելուց հետո: Երկրորդ պսակի համար Պողոս առաքյալն ասում է. «...ամուրիներին և այրիներին ասում եմ լավ կլինի, որ նրանք ինձ նման կենան, եթե համբերություն չունենան, թող պսակվեն, որովհետև ավելի լավ է

² Մարմնի վրա (առավելապես գլխին) սպիտակ նշան՝ նիշ, մարմնի վրայի պուտ բիծ, պուտ-պուտ, պիսակավոր:

³ Քոս, քոստություն, բորոտություն, ուրկություն:

⁴ Բանն այն է, որ նախկինում հրեաներն այնքան խստասիրտ էին, որ կարող էին անգամ կնոջն սպանել կամ կնոջ կյանքը վտանգել, դրա համար էլ մարգարեն պատվիրեց ապահարզանի թղթով կանանց ազատ արձակել:

ամուսնանալ քան ջեռնու...» (Ա Կորնթ. է 8-10): Իսկ Հռոմեացիների թղթում առաքյալը գրում է. «Քանի որ կնոջ մարդը կենդանի է. Նա օրենքով կապված է, իսկ եթե մարդը մեռնի նա ազատ է» (Հռոմ. է 2-4): Այսպիսով, ըստ առաքյալի խոսքի՝ երկրորդ ամուսնությունը թույլատրվում է միայն ամուսիններից մեկի մահվան պարագայում: Հայ եկեղեցին նույնպես, հիմնվելով Սուրբ Գրքի և կանոնական սահմանումների վրա, թույլատրում է երկրորդ պսակը: Սակայն, այս ամենով հանդերձ, թե՛ եկեղեցին, և թե՛ Աստուածաշունչը չեն խրախուսում երկրորդ ամուսնությունը, այլ ընդառաջ են գնում մարդուն՝ զերծ պահելով շնությունից և այն մեղքերից, որոնց հակված է մարդկությունը և որոնք պահպանվում են մինչ օրս:

Քրիստոնեական մարդաբանությունը հանգում է այն համոզմունքին, որն ամրապնդվում է աստվածաբանական, փիլիսոփայական, բժշկական, հոգեբանական բազմաթիվ հաստատումներով, որ մարդը ստեղծվել է մենամուսնությամբ՝ մոնոգամիայի համար: Աստված ոչ միայն նախատեսեց մարդուն մոնոգամիայի համար, այլև ստեղծեց նրան այնպես, որ մարդկային անձի լավագույն զարգացմանը և կատարելության հասնելու ճանապարհն անցնի ամուսնական միասնությամբ [9]: Եկեղեցական կանոնադրության տեսանկյունից մարդը կոչված է մենամուսնությանը (կամ որ նույնն է՝ միակնությանը) և մոնոգամիային: Կանոնական իրավունքը դատապարտեց ու երկարամյա ապաշխարանք սահմանեց անառակության համար և որպես դրա դեմ պայքարի միջոց ճանաչեց երկրորդ պսակի իրավունքը: Բանն այն է, որ Հայ եկեղեցու հայրերը պսակի օրհնության կարգը սահմանելիս մեծ կարևորություն տվեցին ամուսանացողների կուսությանը: Ավելին, պսակի օրհնության կարգը պայմանավորվեց կուսությամբ [2]: Ընդունվեցին մի շարք կանոններ, որոնք կուսության խախտումը մինչև պսակի օրհնությունը պատժելի համարեցին երկու սեռերի համար, իսկ Շահապիվանի 444 թ. ժողովի կանոններով պսակադրության կարգն աղերսվեց կուսության հետ: Սահմանվեց պսակի օրհնության երկու կարգ. ա) **կուսանի** և բ) **երկակի** (ոչ կույսի) պսակի օրհնություն: Կեսարիայի ժողովի Բ կանոնով դատապարտվում է մինչամուսնական սեռական հարաբերությունը՝ որակվելով շնություն [7]: Նույնը սահմանված է Լուսավորչի Ե կանոնով [7]:

Այսպիսով, նշված կանոններից պարզ է դառնում, որ IV դարում հավանաբար ոչ կույսի պսակը այլ ծեսով չէր օրհնվում: Սակայն, հոգևոր դասը, ճիշտ գնահատելով նշյալ խնդրի վերաբերյալ երկրում առկա իրավիճակը, արդեն V դարում ընդունեց պսակի օրհնության վերաբերյալ նոր կանոններ, որոնք ներգործության տեսակետից էապես տարբերվեցին նախկին սահմանումներից: Ըստ նոր կարգի՝ կույսի պսակի օրհնության ծեսը պիտի տարբերվեր ոչ կույսի պսակի օրհնությունից: Ամուսնացողը կույս էր, թե ոչ, նրա պսակը ենթակա էր օրհնության, բայց կույսինը՝ կույսի պսակի օրհնության ծեսով, իսկ ոչ կույսինը՝ նրանց համար մշակված արարողությամբ: Այս բարեշրջության հիմքն, ամենայն հավանականությամբ, դրվեց Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կենդանության օրոք, բայց օրինականացումը տեղի ունեցավ Շահապիվանի ժողովում: Նման տեսակետը հիմնավոր է թվում այն պատճառով, որ

Շահապիվանի ժողովից առաջ ընդունված ոչ մի այլ կանոնախումբ անգամ հեռավոր ակնարկ չէր պարունակում կուսության հետ կապված երկու ինքնուրույն ծեսերի գոյության մասին: Բացառված չէ, որ նոր կարգի հիմքն առաջին անգամ դրվեց Հայ եկեղեցու «Մաշտոց» ծիսամատյանում: Այսպիսով, ըստ Շահապիվանի Գ (3) կանոնի՝ պոռնկացողների ապաշխարելու կարգը սահմանվեց առանց որևէ ժամանակահատվածի եկեղեցու ներսում կամ դրսում [7]՝ ի տարբերություն Կեսարիայի, Գրիգոր Լուսավորչի և Նեոկեսարիայի վերոնշյալ կանոնների, որոնք սահմանում էին եռամյա ապաշխարություն: Գ կանոնով սահմանվեց ներգործության երկու նոր միջոց՝ տուգանք և երկրորդ անգամ ամուսնացողի պսակի օրհնության կարգ, որն էապես տարբերվում էր կույսերի պսակի օրհնությունից. նույնը սահմանում էր նաև Է (7) կանոնը՝ աղջկան առևանգելու և նրա հետ պոռնկելու կապակցությամբ [7]: Սակայն, հաշվի առնելով, որ առևանգումը հանցագործություն էր, Է (7) կանոնը տուգանելուց բացի «սուտ փեսայի» համար սահմանում էր ապաշխարանք՝ երեք տարի ժամանակով: Եվ, ի տարբերություն Կեսարիայի և Լուսավորչի կանոնների, եռամյա ապաշխարանքը սահմանվեց միայն առևանգմամբ պոռնկացած սուտ փեսայի համար, իսկ այլ դեպքերում եռամյա ապաշխարանքը չէր գործում: Շահապիվանի ժողովը, սահմանելով երկրորդ պսակի կարգը, ելնում էր այն հանգամանքից, որ առաջին պսակը պետք է պատշաճ կարգով դադարեցված լինի: Վերջինիս գոյության պայմաններում երկրորդ պսակն օրհնվել չէր կարող: Նույն նպատակն էր հետապնդում նաև «Մաշտոց» ծիսամատյանը [10], Բարսեղ Կեսարացուն վերագրված «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՄԼԷ (237) կանոնը, որը սահմանում էր. «Քահանայ առանց քննելոյ պսակ մի՛ դիցէ...: Ապա եթէ քննէ եւ ոչ խոստովանին, եւ այլք չյայտնեն զչար գործս նոցա, տացէ զմարմինն Տեառն, զի անպարտ է քահանայն ի մեղաց նոցա» [6]: Հարկ է նշել, որ երկրորդ պսակի օրհնությունն ուներ տարբերակիչ մի շարք առանձնահատկություններ՝

ա) պսակվողների գլխին խաչի փոխարեն դրվում էր խաչակնքված ուռի կամ բավարարվում էին միայն խաչակնքելով (տե՛ս Կանոնք Շահապիվանի ժողովի Գ կանոն),

բ) ծիսական գործողությունների ճոխությամբ զգալիորեն զիջում էր կուսանի պսակի օրհնությանը (տե՛ս «Մաշտոց» ծիսարանը),

գ) քահանային արգելում էին մասնակից լինել երկրորդ կին առնողի հարսանիքին, «զի ոչ են հարսանիք, այլ լոկ հացուտիք» [6] (տե՛ս Նեոկեսարիայի՝ Է, Երկրորդ Նիկիականք՝ ԼԹ կանոնները),

դ) երկակնության համար նշանակվում էր ապաշխարանք 3-4 տարի տևողությամբ (Շահապիվանի ժողովից հետո ապաշխարանքի ձևը և տևողությունը թողնվեց առաջնորդի հայեցողությանը),

ե) այրիներին թագ չեն դնում, այլ ուռի. «Յերկրորդ պսակին ոչ դնի թագ՝ եւ ոչ մերձ բեմին. այլ ի մէջ եկեղեցոյն պսակին: Եւ ցուցանէ զի ամուսնացեալքն՝ ոչ ունին զկուսանաց պսակն. եւ ոչ զնոյն տեղի» [11]:

Հետաքրքրական է, որ Շահապիվանի և Հովհաննես Օձնեցու (717-728 թթ.) կանոններով երկրորդ պսակի կարգը պետք է պարտադիր կատարվեր եկեղեցում: Օձնեցու ԺԶ (16) կանոնով սահմանվեց՝ *«Իսկ զերկեակսն նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին միջնորդաւ եւ խաւսնականաւ քաւանեցուցանել յիրերաց յաւժարութիւն եւ յեկեղեցոյն եւ ի քահանայիցն արհնութենէ ընդունել զնշան զուգաւորութեան իրեանց»* [7]: Այս կանոնի կարգը խախտող զանցառուների համար սահմանեց նաև ներգործության իրավական միջոց՝ պատիժ: Այս խնդիրը, սակայն, այլ ձևով է լուծվել Բարսեղ Կեսարացուն վերագրվող «Վասն պէսպէս...» կանոնախմբում, որի ՄԼԸ (238) կանոնի համաձայն՝ *«երկրորդացն արհեսցէ քահանայն պսակ առ դրանն եւ դիցէ ի գլուխ նոցա առ դրան եկեղեցոյն՝ մինչեւ ապաշխարեսցեն եւ արժանի լիցին արհնաց»* [6]:

Հատկանշական է, որ արդեն V դարում խիստ կարգուկանոն էր սահմանվել պսակից առաջ հարաբերություն չունենալու վերաբերյալ՝ տուգանքով, ծեծով, իսկ ապաշխարութեամբ պատժվում էր պսակից առաջ հարաբերություն ունեցողը և ենթարկվում երկրորդ պսակի կարգին: Այս հանգամանքն անտեսող և այսպիսի պսակ կատարող հոգևորականը նույն կանոններով ենթարկվում էր կարգալուծության և տուգանքի: Նշված դեպքում երկրորդ պսակի կարգ սահմանելով՝ Հայոց եկեղեցին ոչ թե հրաժարվում է մինչամուսնական մաքրության համար պայքարելու գաղափարից, այլ փոխում է այդ նպատակին հասնելու միջոցը, որը բարոյական ներգործության տեսակետից ինքնատիպ միջոց էր՝ ի շահ կուսության: Այսպիսով, ըստ Շահապիվանի ժողովի Գ կանոնի՝ եթե պսակվողներից մեկը կույս է, իսկ մյուսը՝ ոչ, ապա առաջինի համար կատարվում է կույսի պսակի կարգը, իսկ մյուսի համար՝ երկրորդ պսակի կարգը [6]: Ուշագրավ է, որ Ներսեսի և Ներշապուհի ԻԵ (25) կանոնն այս խնդրի վերաբերյալ սահմանում է հետևյալ մոտեցումը. *«Չպետք է կույսերին այրիների հետ և ոչ այրիներին կույսերի հետ ամուսանացնել, որովհետև պարտ է»* [6]:

Այսպիսով, հիմնվելով Կանոնագրքի և Մաշտոց ծիսամատյանի հաղորդած տեղեկությունների վրա՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ դեռևս IV դարից սկսած՝ Հայ եկեղեցին ընդունել է երկրորդ ամուսնությունն իբրև անառակության դեմ պայքարի միջոց՝ այդպիսի պսակի օրհնության համար սահմանելով հատուկ կարգ: Սակայն հետագա դարերում երկրորդ պսակը սկսեց օրհնվել առաջին պսակի նման, իսկ ապաշխարումը վերացավ:

Այլ է խնդիրը երրորդ և նույնիսկ չորրորդ ամուսնությունների դեպքում: Այս խնդիրն իր արտահայտությունն է գտել Հարանց հետևողաց կանոնախմբի ԺԴ (14), Նեոկեսարիայի Գ (3), Է (7), Թ (9), Լաոդիկեի Ա (1), Բարսեղ Կեսարացու Դ (4), Սիոն կաթողիկոսի ԺԳ (13), Բարսեղին վերագրված «Վասն պէսպէս...»-ի ՄԼԹ (239) կանոններում: Մասնավորապես, Բարսեղ Կեսարացու Դ (4) կանոնը դատապարտում է երրորդ և ավելի անգամ ամուսնությունը, սահմանելով, որ երկրորդ ամուսնության սահմանն անցնողն արժանի է ամուսին կոչվելու [6]: Մեկ այլ կանոնով՝ Բարսեղն այսպիսի ամուսնությունները որակում է պոռնկություն, որոնք եկեղեցու կողմից

ընդունելի չեն [6]: Այս կանոններն իրենց խստությամբ հանդերձ, այնուամենայնիվ, չեն լուծում պսակը, այլ միայն ապաշխարանք են սահմանում:

Վերլուծելով վերոնշյալը՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ երրորդ և չորրորդ պսակները, այնուամենայնիվ, թույլատրել է եկեղեցին, քանզի սահմանելով այս կանոնները, ամեն դեպքում չի լուծարել երրորդ և չորրորդ պսակը, ավելին՝ սահմանել է ապաշխարության կարգ, որից հետո այսպիսի զույգերն ընդունելի են եղել եկեղեցում: Երկրորդ կարևոր փաստարկն այն է, որ Ներսես Ե-ն հրաման տվեց թույլ տալ չորրորդ և հինգերորդ պսակները՝ նախօրոք իմանալով պսակվողի ծայրահեղ դրությունը և անճար վիճակը [8]: Երրորդ կարևոր փաստարկն այն է, որ ձեռագիր Մաշտոցներում հանդիպում ենք նաև «Երրորդ պսակի կանոն»-ին [12], որտեղ Պսակի կարգի բովանդակությունը նույնն է, միայն ուրիշ է աղոթքի բնույթը:

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ Սուրբ Գրքի թե՛ Հին, և թե՛ Նոր Կտակարաններում առկա են բազմամուսնության դեպքեր (օրինակ՝ Տոբիթի գրքում Սառան, ով ամուսնացել էր 7 անգամ, կամ սամարացի կինը, ով ամուսնացել էր 5 անգամ): Այս առումով հետաքրքիր է Հիսուս Քրիստոսի զրույցը սամարացի կնոջ հետ. այս զրույցի ժամանակ Քրիստոսը բացահայտում է կնոջ գաղտնիքը: Այս ավետարանական դրվագում հատկանշական է այն, որ Հիսուս Քրիստոսը ոչ միայն չի քննադատում այդ երևույթը, այլև չի ստիպում կնոջն ընդհատել իր հարաբերություններն այդ տղամարդու հետ: Այսպիսով, Հայ եկեղեցին, առաջնորդվելով սիրո և ողորմության ճանապարհով, թույլատրում է երկրորդ պսակը և արգելում երրորդ և ավելի պսակները:

Հետաքրքրական է, որ Ռուս ուղղափառ եկեղեցին թույլատրում է երկրորդ ամուսնությունը, եթե ամուսիններից մեկը մահացել է: Ըստ ռուս քահանա Վ. Կրեչետովի՝ ուղղափառ եկեղեցում ընդունված չէ երրորդ անգամ ամուսնանալը, և ըստ Ռուս ուղղափառ եկեղեցու կանոնդրության՝ օրինական եկեղեցական ամուսնալուծությունից հետո երկրորդ ամուսնությունը թույլատրվում է միայն «անմեղ» ամուսնուն, իսկ այն անձինք, որոնց մեղքով կատարվել է ամուսնալուծությունը, կարող են պսակադրվել երկրորդ անգամ միայն ապաշխարությունից հետո [13]: Այն բացառիկ դեպքերում, երբ թույլատրվում է երրորդ ամուսնությունը, մեծանում է պատժի ժամկետը: Ուղղափառ եկեղեցին ևս չի խրախուսում երկրորդ ամուսնությունը, բայց ընդհուպ է գնում անձին, որպեսզի զերծ պահի մեղքերից, որոնց հակված է ցայսօր [13]:

Այսպիսով՝ ուղղափառ եկեղեցին, այնուամենայնիվ, թույլ է տալիս ամուսնալուծությունը և երկրորդ ամուսնությունը (նույնիսկ երրորդը), իսկ եթե երկրորդ ամուսնության ժամանակ ամուսնացողներից մեկն ամուսնանում է առաջին անգամ, ապա թույլատրվում է ամուսնությունը, իսկ այն դեպքում, երբ երկուսն էլ ամուսնանում են երկրորդ անգամ, ապա գոյություն ունի հատուկ ծիսակարգ, որում չկան պսակներ, և սա, ըստ էության, չունի հանդիսավոր բնույթ [9]: Այստեղ կարևոր է նաև այն, թե մարդն ինչ հիմքով է ամուսնալուծվում: Եթե ամուսնալուծվում է կրկին ամուսնանալու համար, ապա նրա մեղքը մեծանում է: Հարկ է նաև նշել, որ ի տարբերություն

Առաքելական և Ուղղափառ եկեղեցիների, Կաթոլիկ եկեղեցում բացակայում է երկրորդ ամուսնությունը: Կանոնական տեսանկյունից բացակայում է նաև եկեղեցական ամուսնալուծությունը, սակայն կաթոլիկ եկեղեցականները գտնում են առաքելական կանոնները շրջանցելու միջոցը, որպեսզի մարդիկ երկրորդ ամուսնության ժամանակ կարողանան ստանալ եկեղեցու օրհնությունը [14]:

Ըստ վերջին տարիների սոցիոլոգիական հարցումների՝ մեր երկրում աճել է ամուսնալուծությունների թիվը, ինչն էլ նպաստում է երկրորդ կամ երրորդ ամուսնության հաճախացմանը: Սակայն երկրորդ և երրորդ ամուսնությունների շատ քիչ տոկոսն է, որ կատարվում է Հայ առաքելական եկեղեցու ծեսով: Հիմնվելով մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների վրա՝ կարող ենք փաստել, որ հասարակությունը կողմ է երկրորդ և երրորդ պսակին, չնայած նրան, որ Հայ առաքելական եկեղեցին արգելում է երրորդ պսակը, իսկ երկրորդը թույլատրում է ոչ բոլոր դեպքերում: Հավելենք նաև, որ հարցվածների զգալի մասը տեղյակ չէր այս հարցի վերաբերյալ Հայ առաքելական եկեղեցու կանոնական դիրքորոշման մասին: Այդ է պատճառը, որ հայ հասարակության շրջանում երկրորդ և երրորդ ամուսնությունները կատարվում են եկեղեցու պատերից դուրս և առանց աստվածային օրհնության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Մխիթարյան Ա.**, Պսակի կարգն ըստ «Մաշտոց» ծիսական ժողովածուների, Բանբեր Մատենադարանի, թիվ 19, Երևան, Նաիրի հրատ., 2012, էջ 73, 78:
- [2] **Հովհաննիսյան Ս. Հ.**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976, էջ 153-154, 259, 260, 268:
- [3] **Օրմանյան Մ.**, Ծիսական բառարան, Երևան, Հայաստան հրատարակչություն, 1992, էջ 99-100:
- [4] **Փոլադեան Դ.**, Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցույ խորհուրդները, Պեյրուֆ, 1957, էջ 87:
- [5] «Մաշտոց», Վենետիկ, 1831 (ՌՄԶ.):
- [6] Կանոնագիրք Հայոց, հատոր Բ, աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի**, Երևան, 1971, էջ 205-6, 166, 432-5, 487, 337-8, 166:
- [7] Կանոնագիրք Հայոց, հատոր Ա, աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի**, Երևան, 1964, էջ 104, 169-70, 245, 432-5, 439-40, 522-3:
- [8] **Մելիք-Թանգյան Ն.**, Հայոց եկեղեցական իրավունքը, Էջմիածին, 2009, էջ 818-9, 795:
- [9] **Лоргус А., Амелина Т.**, Повторные браки. Никто не обещал, что будет легко, URL: <http://www.pravmir.ru/povtornyie-braki-nikto-ne-obeshhal-chto-budet-legko/> (дата обращения: 20.05.2018)
- [10] Մաշտոցյան Մատենադարան, ձեռագիր 953, էջ 189ա,
- [11] **Տաթևազի Գ.**, Ամառան հատոր, Երուսաղեմ, 1998, էջ 203:

[12] Մաշտոցյան Մատենադարան, ձեռագիր 4577 (Մաշտոց ձեռագ, ԺԹ դար), էջ 155ա:

[13] О повторных браках и венчании, Беседа с протоиереем Валерианом Кречетовым, <http://www.pravoslavie.ru/66120.html> (дата обращения: 20.05.2018).

[14] Второй брак, URL: <http://www.pravmir.ru/vopros-otvet/category/chelovek/brak-i-cemya/vtoroj-brak-brak-i-cemya-chelovek/> (дата обращения: 20.05.2018).

Գրիգորյան Հերիքնազ

ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՊՍԱԿԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Բանալի բառեր՝ երկրորդ և երրորդ ամուսնություն, Հայոց եկեղեցի, Կանոնագիրք Հայոց, ամուսնալուծություն, Աստվածաշունչ, Ուղղափառ, Կաթոլիկ, ծես, սոցիոլոգիական հարցում:

Տվյալ հոդվածում քննարկվում է երկրորդ և երրորդ պսակի խնդիրը՝ ըստ Հայ եկեղեցու կանոնադրության, ծեսի և քրիստոնեական վարդապետության: Միակողմանի մոտեցումից խուսափելու նպատակով հոդվածում ներկայացրել ենք նաև այս հարցի վերաբերյալ Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումը: Հոդվածի շրջանակներում, այդպիսով, փորձել ենք բացահայտել երկրորդ և երրորդ ամուսնությունների առաջացման պատճառները, թույլատրելի կամ անթույլատրելի բնույթը:

Григорян Эрикназ

ПРОБЛЕМА ПОВТОРНОГО И ТРЕТЬЕГО БРАКА СРЕДИ АРМЯН

Ключевые слова: повторный и третий брак, армянская церковь, армянская книга канонов, развод, Библия, православный, католический, обряд, социологический опрос.

В данной статье рассмотрены повторные и третьи браки согласно канонам, обряду и учению армянской церкви. Во избежание одностороннего подхода к этому вопросу в статье также представлены подходы Православной и Католической церквей. Таким образом, в рамках статьи мы попытались раскрыть причины образования институтов повторного и третьего брака, характер их допустимости или неприемлимости.

ISSUES OF SECOND AND THIRD MARRIAGES AMONG ARMENIANS

Key words: second and third marriages, Armenian Church, Armenian book of canons, divorce, Bible, Orthodox, Catholic, ritual, sociological survey.

Issues of the second and third marriages are discussed in the article according to the canons, ritual tradition and the theology of the Armenian Church. To avoid any unilateral approach, the article presents some important approaches of Orthodox and Catholic Churches. The causes of second and third marriages, as well as their nature of being permissible or impermissible have therefore been attempted to be discussed within the article.